# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"24" հուլիսի 2015թ. № 101 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ
2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 23-Ի N 57-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով,հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 2015 թվականի հունիսի 22-ի <<Աշոտ Ասրյանին ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ նշանակելու մասին>> N 144-Ա հրամանը, որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2013 թվականի ապրիլի 23-ի «Սյունիքի ներմարզային երթուղիներում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» N57-Ա որոշման հավելվածում «Կ.Կոզմանով» բառը փոխարինել «Ա.Ասրյան» բառով:
2. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2015թ. հուլիսի 24
ք. Կապան